ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
ԵՊԼՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի №11 ՆԻՍՏԻ ՈՐՈՇՄԱՄԲ
ԵՊԼՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԱՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի գիտական խորհրդին կից էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործառույթներն են համալսարանի անձնակազմի և ուսումնառողների վարքի՝ ԵՊԼՀ-ի «Էթիկայի կանոնագրքում» ամրագրված էթիկայի սկզբունքներին համապատասխանության քննությունը և բուհի հակակոռուպցիոն քաղաքականության մշակումն ու դրա իրականացման վերահսկումը:
2. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ԵՊԼՀ-ի կանոնադրությանը, ներքին իրավական ակտերին ու սույն աշխատակարգին համապատասխան:
3. Հանձնաժողովը գործում է արդարության, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքների հիման վրա:
4. Հանձնաժողովի կազմը ձևավորում է և հանձնաժողովի գործունեության ժամկետը սահմանում է ԵՊԼՀ-ի գիտական խորհուրդը:
5. Հանձնաժողովի եզրակացության հիման վրա ԵՊԼՀ-ի ռեկտորը սահմանում է կարգապահական տույժեր և կայացնում է համապատասխան որոշումներ:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Հանձնաժողովը՝

   ա) մշակում և ԵՊԼՀ-ի գիտխորհրդին է ներկայացնում «Էթիկայի կանոնագիրքը», որը ներառում է բուհի անձնակազմի և ուսումնառողների վարքի նորմերի նկարագրությունը և դրանց խախտման համար նախատեսված կարգապահական տույժերը,

   բ) ելնելով էթիկայի կանոնագրքում ամրագրված վարքի սկզբունքներից և նորմերից՝ քննում է վարքի նորմերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ դիմումները և եզրակացություն է ներկայացնում ԵՊԼՀ-ի ռեկտորին խախտման առկայության կամ դրա բացակայության մասին, առաջարկություն է ներկայացնում խախտման համար նախատեսվող կարգապահական տույժի վերաբերյալ,

   գ) մշակում և ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում բուհի հակակոռուպցիոն քաղաքականությունը, բուհում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի տարեկան ծրագրերը և ապահովում դրանց իրականացման վերահսկողությունը:

7. Հանձնաժողովը ԵՊԼՀ-ի ստորաբաժանումներից, աշխատակիցներից ու ուսումնառողներից կարող է պահանջել և ստանալ վարքի քննվող դրսևորմանը վերաբերող տեղեկություններ և նյութեր:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպում է նիստերի միջոցով:
9. Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում է հանձնաժողովի անդամների երկու երրորդը:
10. Հանձնաժողովում որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

11. Քննվող հարցի կողմերը պետք է պատշաճ կերպով տեղեկացված լինեն Հանձնաժողովի նիստի տեղի ու ժամի վերաբերյալ և կարող են ներկա գտնվել այդ նիստին:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ, ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԹՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Հանձնաժողովի նախագահը՝

ա) հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը,

բ) ստորագրում է Հանձնաժողովի եզրակացությունները և նիստերի արձանագրությունները,

գ) ներկայացնում է Հանձնաժողովի աշխատանքը ռեկտորին և գիտխորհրդին,

դ) անհրաժեշտության դեպքում կարող է հրավիրել մասնագետներ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

ե) վարքի նորմի ենթադրյալ խախտման քննության համար բավարար տեղեկատվության բացակայության դեպքում միջնորդությամբ դիմում է ռեկտորին,

զ) անհրաժեշտության դեպքում հանձնարարում է էթիկայի հանձնաժողովի անդամներին՝ քննվող հարցի վերաբերյալ ուսումնասիրություն կատարելու և ներկայացնելու,

է) հաշվետու է համալսարանի գիտական խորհրդին և ռեկտորին:

13. Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

ա) կատարում է Հանձնաժողովի նախագահի պարտականությունները և լիազորությունները նախագահի բացակայության ժամանակ,

բ) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ծանոթանում է վարքի նորմերի ենթադրյալ խախտման հանգամանքներին և կազմակերպում Հանձնաժողովի նիստ հրավիրելու համար անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրումը,

գ) ունի հանձնաժովի անդամին վերապահված իրավունքներն ու պարտականությունները:

14. Հանձնաժողովի քարտուղարը՝

ա) կազմակերպում է հանձնաժողովի նիստերը,

բ) ապահովում է գրությունների և փաստաթղթերի շրջանառությունը,

գ) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները

դ) ստանում, գրանցում, պահպանում և հանձնաժողովի նախագահին է փոխանցում գրությունները, վարքի նորմերի խախտման վերաբերյալ դիմումները,

ե) ունի հանձնաժովի անդամին վերապահված իրավունքներն ու պարտականությունները:

15. Հանձնաժողովի անդամը՝

ա) մասնակցում է էթիկայի կանոնագրքի մշակման աշխատանքներին,

բ) ներկայացնում է առաջարկություններ կանոնագրքում փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ,

գ) մասնակցում է Հանձնաժողովի աշխատանքներին, ծանոթանում է նյութին և մինչև նիստը կամ նիստի ժամանակ ներկայացնում կարծիք,

դ) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ քննարկվող նյութի վերաբերյալ ներկայացնում է ուսումնասիրություն,

ե) Հանձնաժողովի նիստերին քվեարկում է ընդունվող որոշումների և եզրակացությունների վերաբերյալ: